ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1965 Общественные науки

Ե. Մ. Խալեյան

ՀԱՅ ՌԱԶՄԻԿՆԵՐԸ ՂՐԻՄԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՄԱՐՏԵՐՈՒՄ

Ուկրաինական ռազմաճակատների զորքերի կողմից 1943 թ. աշնանը Դնեպրի գետանցումը, Սիվաշի պլացդարմի գրավումը, 1944 թ. գարնանը Խերսոնի, Նիկոլաևի և Օդեսայի ազատագրումը նոր իրադրություն ստեղծեցին Սև ծովի ավազանում։ Օրակարգի անհետաձգելի հարց էր դարձել Ղրիմի ազատագրումը և թշնամուն Սև ծովից վոնդելը։ Բայց գերմանացիները համառությամբ պաշտպանվում էին։

Ղրիմը իրենց ձեռքում պահելը գերմանացիների համար ուներ քաղաքական և ռազմական խոշոր նշանակություն։ Դրա համար էլ թշնամին այնտեղ նորանոր օժանդակ ուժեր ու տեխնիկա էր փոխադրում Օդեսայի շրջանից, Ռումինիայից և Իտալիայից։ «Ղրիմի կորուստը Գերմանիայի համար կնշանակեր հեղինակության խիստ անկում հարավ-արևելյան Եվրոպայի երկրներում և «չեզոք» Թուրքիայում, որոնք հանդիսանում էին նավթի և սուր դեֆիցիտ ստրատեգիական նյութերի կարևոր աղբյուրներ։ Բացի այդ Ղրիմը պաշտպանում էր հիտլերյան Գերմանիայի զորքերի ստրատեգիական թևը և նրա ծովային կարևոր կոմունիկացիաները, որոնք սևծովյան նեղուցներով ձգվում էին Սև ծովի արևմտյան ծովափի նավահանգիստները»[1]։

Ղրիմից չնահանջելու ամենախիստ հրաման ստանալով, գերմանական 17-րդ բանակը և ուրիշ այլ միավորումներ ծովափնյա բարձրություններում ստեղծել էին պաշտպանության անառիկ բնագծեր, ռազմաճակատի ամբողջ երկայնքով և խորությամբ կառուցել էին խրամատներ, կրակակետեր և այլ ամրություններ, որոնց շրջակայքը ականապատված և ծածկված էր փշալարերի խիտ ցանցով։

Բայց ոչ մի ամրություն չկանգնեցրեց կարմիր բանակի դեսանտայիններին, որոնք ներխուժումը սկսեցին նաև Թամանից։

1943 թ. նոյեմբերի 1—3-ը Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի 18-րդ և 56-րդ բանակների մի շարք զորամասեր Սևծովյան նավատորմի և Ազովի ռազմական նավատորմիկների հետ միասին, Կերչի նեղուցով, երկու կետերում դեսանտ հանեցին Ղրիմի արևելյան ափը։ Դեսանտայինները դուրս եկան Էլտիգենի շրջանը՝ Կամիշ Բուրունից հարավ և Կերչի թերակղզին։ Այդ պլացդարմում մարտերն արտակարգ արյունահեղ և համառ բնույթ ընդունեցին։

Թամանի թերակղզուց դեսանտայիններին մեծ օգնություն էր ցույց տալիս ռազմաճակատի հրետանին, որը կրակի հեղեղ էր թափում հակառակորդի դիրքերի վրա, ավերում, քարուքանդ անում դրանք։

---

1 Տե՛ս «История Великой Отечественной войны Советского Союза 1941—1945», Воениздат, МО СССР, Москва, 1962, т. 4, стр. 88.

Հակառակորդը կռվում էր օրհասական կատաղությամբ։ Բայց կարմիրբանակայինները մնացին անսասան, ետ շպրտելով ու կորուստներ պատճառելով թշնամուն և քայլ առ քայլ լայնացնելով պլացդարմը։ Արտակարգ ծանր էր դրությունը 18-րդ բանակի դեսանտայինների դրաված էլտիգենի հատվածում։ Այստեղ հակառակորդի գերազանց ուժերի ճնշման հետևանքով խանգարվել էր ռազմամթերքների և սննդի մատակարարումը, անհնարին էր դարձել վիրավորների տեղափոխումը։ Նման պայմաններում կարմիր բանակի զորամասերը ստիպված էին թողնել էլտիգենի պլացդարմը։ Ուժերի մի մասը էվակուացվում է Թաման, իսկ մյուս մասը ճեղքելով գերմանական և ռումինական զորքերի թիկունքը Կերչի թերակղզում՝ միանում է 56-րդ բանակի դեսանտային խմբին, ձմռան ընթացքում լայնացնում պլացդարմը և այն ամուր պահում իր ձեռքում առաջիկա հարձակման համար։

Այս օպերացիան Ղրիմի ազատագրման նախերգանքը լինելով հանդերձ, միաժամանակ հանդիսանում էր Հյուսիսային Կովկասի ազատագրության եզրափակիչ էտապը[2]։ Ինչպես այս դեսանտային օպերացիայում, այնպես էլ Ղրիմի վերջնական ազատագրման համար հարձակողական գործողություններին ռուս մեծ ժողովրդի, Սովետական Միության բոլոր ժողովուրդների զավակների հետ միասին ուս-ուսի տված մասնակցում էին նաև կովկասյան ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի շատ զավակներ՝ հետևազորայիններ, ծովայիններ, տանկիստներ, օդաչուներ և հայկական Թամանյան 89-րդ հրաձգային դիվիզիան։

Կերչ թերակղզու էլտիգենի հատվածում ափ իջած 18-րդ բանակի 318 հրաձգային դիվիզիայի առաջին դեսանտայինների թվում էր Երևանի Կիրովյան շրջանի նախկին ռազմական կոմիսար, արիասիրտ հրամանատար, փոխգնդապետ Գրիգոր (Գերասիմ) Բուլբուլյանը, որը գլխավորում էր 1337-րդ հրաձգային գունդը։ Նա դեռևս Նովորոսիյսկը ազատագրելու ժամանակ հմուտ և քաջ դեսանտայինի համբավ էր վաստակել[3]։ Ղրիմում ափ իջնելիս՝ Բուլբուլյանը հակառակորդի տեղատարափ կրակի տակ իր մարտիկներին դուրս բերեց խիստ ամրացված և ականապատված էլտիգենի հենակետը։ Կարմիրբանակայինները ծովափին պլացդարմ ստեղծելով՝ մեկ օրվա ընթացքում ետ մղեցին թշնամու հետևակի և տանկերի մեկը մյուսից կատաղի 14 հակագրոհները։ Դեսանտայինների դրությունը արտակարգ ծանր էր։ Ստանալով էլտիգենից էվակուացվելու հրաման, Բուլբուլյանն իր գնդով ճարպիկ տեղաշարժերով ճեղքելով հակառակորդի շղթան՝ նրա զորքերի թիկունքով միացավ Կերչի թերակղզում գտնվող (56-րդ բանակի) դեսանտային խմբին, որն իր ձեռքում էր պահում պլացդարմը[4]։ Դեսանտային օպերացիայում ցուցաբերած քաջության և հրամանատարական հմտության համար փոխգնդապետ Բուլբուլյանը պարգևատրվեց Լենինի շքանշանով։ Այդ ժամանակ նրա կուրծքը զարդարում էին նաև Նովորոսիյսկի և Թամանի ազատագրման համար ստացած Կարմիր դրոշի և Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշանները։

Նոյեմբերի 21-ից Թամանի Կասա-Զուշկա ցամաքալեղվի նավահանգիս-

---

2 Տե՛ս «История Великой Отечественной войны Советского Союза 1941—1945», Воениздат, МО СССР, Москва, 1961, том 3, стр. 352.

3 Տե՛ս նույն տեղում, էջ 355։

4 Տե՛ս «Սովետական Հայաստան», № 27, 8 փետրվարի, 1944։

ից Կերչի նեղուցով դեպի պլացդարմ փոխադրվեց նաև հայկական Թամանյան 89-րդ դիվիզիան և Առանձին մերձծովյան բանակի զորքերի կազմում, պաշտպանության բնագիծ գրավեց Կերչ քաղաքի մերձակա Բաքսի և Հաջիմուշկա ավանների շրջաններում։ Հետախուզական գործողություններից հետո դիվիզիային հրաման տրվեց մանր գրոհային խմբերով ճեղքել հակառակորդի պաշտպանության գիծը և թափանցել Կերչ քաղաքը։ Դեկտեմբերի 4-ին հրետանային նախապատրաստությունից հետո զորամասերն անցնում են գրոհի։ «Հարազատ Ղրիմը մեզ տեղ է տվել իր գեղեցիկ ափերի վրա։ Մենք պետք է ամրանանք այդ ափերում, որպեսզի կործանիչ հարված հասցնենք Ղրիմը հոչակող ֆաշիստական գազաններին» հայ ռազմիկներին կոչ է անում դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթը[5]։ Հարձակվող Թամանյան զորամասերը կոտրելով թշնամու դիմադրությունը, ներխուժում են հիտլերականների խրամատները։ Սկսվում է կատաղի ձեռնամարտ, որի ընթացքում ակտիվորեն է գործում ավագ լեյտենանտ Մեժլումյանի վաշտը։ Այդ մարտում նշանառու Սաշա Հակոբյանը ոչնչացնում է 27 հիտլերական։ Անձնազոհաբար էին կռվում նաև կապավորներն ու սակրավորները։ Հարձակման ամբողջ ընթացքում ձյուն էր տեղում։ Սովից փչող ցրտաշունչ քամին թափանցում էր մարտիկների ոսկորները, սառած ավազի նման ձյան հատիկները զարնվելով մարտիկների աչքերին, դժվարացնում էին նրանց տեսողությունը և շնչառությունը։ Մարտերը լարված տեմպերով շարունակվում են նաև գիշերները։ Կողմնորոշվելու դժվարին պայմաններում և մինչև ծնկները ցեխի մեջ թաղված ռազմիկները, հիշելով Ղրիմի հողի վրա 1942 թ. մղած մարտերը և հերոսի մահով զոհված ընկերներին, վրեժի ցասումով լցված, արհամարհելով մահն ու դժվարությունները, առաջ էին նետվում։ Թշնամու հրթիռների լույսի և գնդացրային ու ականանետային ուժեղ կրակի տակ սակրավորները թշնամու դիրքերից 80—100 մետր հեռավորության վրա կտրատում էին արգելափակոցները, հանում ականները, ճանապարհ բացում հարձակվող հետևակի համար։ Իր քաջագործություններով աչքի ընկավ սակրավոր Հմայակ Ավետիսյանը՝ լեգենդար հերոս Հունան Ավետիսյանի եղբայրը. «Ես պատրաստ եմ քարուքանդ անել թշնամու բոլոր արգելքները և ճանապարհ բացել մեր հետևակի համար, ինչքան էլ որ դա դժվար լինի»,—ասում էր նա։ Խիզախորեն էր կռվում սակրավոր Ջահան Կարախանյանը։ Հրամանատարությունը նրան դեռևս Նովորոսիյսկի ազատագրման մարտերի ժամանակ Սովետական Միության հերոսի կոչման էր ներկայացրել։ Նա զոհվեց 1943 թ. դեկտեմբերին Կերչի թերակղզում։ Սովետական Միության հերոսի կոչում[6] շնորհվեց ետմահու 1944 թ. մայիսին։ 1944 թ. փետրվարի սկզբին հերոսի մահով ընկավ նաև գնդի հրամանատարի տեղակալ, բոլորի կողմից սիրված, անվեհեր. կադրային սպա, մայոր Մամիկոն Խաչանյանը։

Թամանցիները համառ մարտերով մտան Կերչի կենտրոնական փողոցները։ Նրանք գրավելով տուն առ տուն, փողոց առ փողոց և ջախջախելով թշնամուն, առաջ էին շարժվում ու գրավում նոր բնագծեր։ Քաղաքի գլխավոր նավահանգիստը, երկաթուղային կայարանը և նրա շրջակայքի շենքերն ու փողոցները հակառակորդը վերածել էր անառիկ բերդի։ Հիտլերականները նոր

5 «Կարմիր զինվոր», 27 նոյեմբերի, 1943։

6 Տե՛ս ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական պատերազմի պատմության կաբինետի արխիվ, ֆ. 92, գ. 3, էջ 9 (հետագայում ՀՊՊԿ-ի արխիվ)։

ուժեր բերելով ռեզերվից, ջանում էին կանգնեցնել դիվիզիայի հարձակումը։ Բայց զուր փորձեր։ Մեր դումարտակները ճեղքելով գերմանացիների այդ բունագիծը ևս, գրավում են չորս թաղամաս և ամրանում Կատերլեզ կոչվող ջրանցքի ձախ ափին։

Մարտերի յուրաքանչյուր օր նորանոր հերոսներ էր ծնում։ Խաչիկ Միրոյանի զորամասի մարտիկ Մկրտչյանը 12 անգամ հետախուզության էր գնացել։ Նրա ջոկն անցնելով հակառակորդի թիկունքը, լուսաբացին հանկարծակի գրոհով ոչնչացնում է 40 հիտլերական[7]։ Մ. Մարգարյանի դումարտակի գընդացրորդ Միհրան Խաչատրյանը ճարպկորեն մոտենալով երկհարկանի եկեղեցուն, որը հիտլերականները պաշտպանության ուժեղ հենակետ էին դարձրել, շեշտակի կրակահերթով գմբեթից և պատուհաններից ցած է գլորում մեր դիրքերի վրա կրակող տասնյակ հիտլերականների։ Այնուհետև Խաչատրյանը, չսպասելով իր հետևից հասնող մարտիկներին, միայնակ մտնում է շենքը, երկար կրակահերթ է բաց թողնում առաջին հարկից երկրորդ հարկը խուճապահար փախչող գերմանացիների վրա։ «Շատ հիտլերականներ կոտորվեցին,— գրում է դիվիզիայի թերթը,—կենդանի մնացածներին դյուցազունը սեղմել էր պատին։ 49 զույգ ձեռքեր վեր բարձրացան «Հիտլեր կապուտ» աղերսանքներով։ Մեր ավտոմատավորները լցվեցին եկեղեցին։ 49 գերմանացի գերի վերցվեց և ուղարկվեց թիկունք»[8]։

Այդ օրերին, Կերչում, երկու անգամ թամանցիներին այցի են գալիս Գերագույն գլխավոր հրամանատարության ներկայացուցիչները։ Սովետական Միության մարշալ Կ. Ե. Վորոշիլովը և Առանձին մերձծովյան բանակի հրամանատար, բանակի գեներալ Ի. Ե. Պետրովը։ Նրանք բարձր գնահատական են տալիս միավորման նախապատրաստություններին, ինչպես նաև գեներալ Ն. Սաֆարյանի ռազմավարական հմուտ գործունեությանը։

1944 թ. ապրիլի 11-ին Առանձին մերձծովյան բանակի զորքերը գրոհով ազատագրում են Կերչ քաղաքը և 30 կիլոմետր շարժվում դեպի արևմուտք։ Այնուհետև, զարգացնելով հարձակողական գործողությունները գրավում են Թեոդոսիա քաղաքն ու նավահանգիստը, Կարասուբազարը, Յալթան և ծովափնյա այլ քաղաքներ ու բազմաթիվ բնակավայրեր։

Կերչը ազատագրած զորքերի մեջ հարվածող միավորումներից էր Թամանյան դիվիզիան։ Նրա զորամասերը ապրիլի 11-ի գիշերը անցնելով Կատերլեզ ջրանցքը, որի բոլոր կամուրջները այրել էին հիտլերականները, փողոցային կատաղի մարտերով, հաճախակի ձեռնամարտերի բռնվելով, քայլ առ քայլ թշնամուն դուրս են շպրտում ամրացված շենքերից և փայլուն կերպով կատարում Կերչի ազատագրման համար դիվիզիայի առաջ դրված խնդիրը։

Այդ մարտերում բազմաթիվ նոր խիզախություններ են կատարում ռազմիկները։ Լեյտենանտ Միքայելյանը սողեսող մոտենալով թշնամու դզոտին, ձեռքով բռնելով հրակնատից դուրս ցցված դնգացրի փողը, այն ակնթարթաբար դուրս է քաշում և խլված գնդացրով ահեղ դատաստան տեսնում դզոտում գտնվող հիտլերականների հետ։ Առանձնապես համարձակ էին մարտնչում գումարտակի կոմերիտական կազմակերպիչ Ներսես Իզմայիլյանի ղեկավարած կոմերիտական գրոհայինները։ Նրանք կայարանի շենքերից մեկում շրջապա-

7 «Կարմիր զինվոր», № 38, 19 մարտի, 1944։

8 Նույն տեղում։

տելով մի խումբ հիտլերականների, նոնակների հարվածներով ոչնչացնում են 31 հիտլերական։ Այստեղ նրանք ազատեցին սովետական 35 նավաստիների, որոնց գերմանացիները գերի էին վերցրել և պատրաստվում էին գնդակահարելու։

Կերչի ազատագրման մարտերում վերադաս հրամանատարության առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու համար ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության 1944 թ. ապրիլի 24-ի հրամանագրով Թամանյան 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան պարգևատրվում է Կարմիր աստղի շքանշանով։

Բարձր պարգևը ոգևորում է մարտիկներին ու հրամանատարներին։ Խանդավառվում է նաև ողջ հայ ժողովուրդը։ Առանձին մերձծովյան բանակի հրամանատարությունը և ռազմական խորհուրդը այդ առթիվ Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի հասցեով ուղարկած ողջույնի հեռագրում գրում են. «...Պանծալի գնդերը գրոհեցին Կերչ քաղաքի ամրությունների վրա և ճեղքեցին հակառակորդի խիստ ամրացված պաշտպանությունը Կերչի թերակղզում։

Կառավարությունը բարձր գնահատեց 89-րդ դիվիզիայի մարտական հաջողությունները և նրան պարգևատրեց Կարմիր աստղի շքանշանով»[9]։ Թամանցիները շքանշանով պարգևատրվելու իրենց ուրախ տոնախմբությունը նրշում են մայիսյան տոներին, դեպի Սևաստոպոլ արշավելու ճանապարհին։ Դիվիզիան Հայաստանից ստանում է առատ նվեր-ծանրոցներ՝ կոնյակ, գինի, չոր մրգեր, ավանդական լավաշն ու պանիրը և ոգեշունչ շատ նամակներ։ Հայ ժողովուրդը երբեք չէր մոռանում ռազմաճակատներում գտնվող իր զավակներին։ Նա մտովին շարունակ նրանց հետ էր և ցույց էր տալիս գործնական օգնություն։

Ռազմաճակատից ստացվող հաղթանակի լուրերը բազմապատկում էին թիկունքի աշխատավորների եռանդը։ Կերչի ազատագրման օրերին ծերունազարդ գրող Դերենիկ Դեմիրճյանը արտահայտելով հայ ժողովրդի ջերմ զգացմունքները, թամանցիներին ուղարկած իր նամակում գրում էր. «Միտքս ձեր կողմն է, սիրելի թանկագին մարտիկներ... կատարյալ խաղաղություն է Երևանը, Արարատյան դաշտը, Կոտայքը, Սևանը, Ապարանը, Շիրակը, Փամբակը, բոլորը-բոլորը... Այդ ձեր շնորհիվն է, թանկագին մարտիկներ...

Գիտեմ շատ և շատ թանկ եք վճարում այս խաղաղությանը, Ձեր թանկագին արյունը, բայց ինչ կարող ենք անել, պատերազմը մենք չհնարեցինք, թշնամին բերեց պատերազմը։ Դե մենք էլ պետք է վերջացնենք այդ պատերազմը, բայց պետք է հաղթենք, որ վերջացնենք։

Ճիշտ է խաղաղ է թիկունքում, բայց այստեղ պարապ նստած չեն։ Գարունը գեղեցիկ է, բայց պահանջկոտ։ Մանավանդ այս տարի։ Մեր սերմնացան հացահատիկը գցում են հողը և կանչում են. «Հո՛ղ, հաղթության ցանք է, հաղթության բերք տուր»։ Այնուհետև անվանի գրողը հայ զինվորներին պատմում է Հայաստանի արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրայի հաջողությունների մասին։

«Այո, մենք նման ենք մեր քաջարի և խելացի նախնիներին,— ասում է Դեմիրճյանը,— նրանք էլ մի կողմից կռվել են, մյուս կողմից շինարարել...

Կարոտալի սրտով սպասում ենք Ձեզ, ձեր հաղթական ողջառողջ վերադարձին»[10]։

---

9 «Սովետական Հայաստան», № 90, մայիսի 5, 1944։

10 «Կարմիր զինվոր», № 62, 1944, մայիսի 8։

Ստանալով հայրենի ժողովրդի նյութական ու բարոյական օժանդակությունը, հայ մարտիկներն ու հրամանատարները ուժ ու եռանդ չէին խնայում նորանոր հաղթանակների համար։

Ղրիմի քաղաքներն ու գյուղերն ազատագրող հայ ռազմիկներն ամենուրեք հանդիպում էին Ղրիմի հայ բնակիչներին[11], որոնք անսահման տառապանքներ էին կրել հիտլերյան օկուպացիայի լծի տակ։ Նրանք ուրախության արցունքներով էին դիմավորում իրենց ազատարարներին։

Հին Ղրիմի (Ստարի Կրիմ) բնակիչներից մեկը մոտենալով հայ զինվորներին, ռուսերեն հարցնում է.

— Դուք հայե՞ր եք։

— Այո, Դուք էլ եք հայ,— հարց է տալիս պատասխանող զինվորը։

— Ոչ, ես թաթար եմ։

— Իսկ հայեր կա՞ն այստեղ։

— Այո, կան,— պատասխանում է ծերունին,— բայց շատերին կոտորեցին ֆաշիստները։ Չխնայեցին նույնիսկ հենց նոր ծնված երեխաներին։ Մի հայի ընտանիքից ոչ մի շունչ չմնաց[12]։

Դա տեղի էր ունեցել 1944 թ. ապրիլի 12-ին, երբ նահանջող հիտլերականները, առանց ազգի խտրության, կոտորել էին քաղաքի 580 խաղաղ բնակիչների։ Կենդանի մնացածները մի քանի օր շարունակ թաղում էին գնդակահարված հարազատներին։ Այս բոլորը Թամանցիների սրտում զայրույթի կրակ բորբոքեց, վրեժխնդրության ցասումով լի, նրանք անզուսպ կերպով ձգտում էին դեպի մարտ, որպեսզի վրեժ լուծեն թշնամուց։

* * *

1944 թ. ապրիլի սկզբին 4-րդ ուկրաինական ռազմաճակատի զորքերը նորից Ղրիմ ներխուժեցին հյուսիսից Պերեկոպի և Սիվաշի իրենց պլացդարմից։ Ճեղքելով հակառակորդի ամրությունները, նրանք դուրս եկան Իշունյան դիրքերը և Արմյանսկ քաղաքից արևելք, իրար ետևից ազատագրեցին Ջանկոյը, Եվպատորիան, Բախչիսարայը, Ալուշտան, իսկ ապրիլի 13-ին՝ նաև Սիմֆերոպոլը և շատ ուրիշ բնակավայրեր։

Կերչի և Պերեկոպի ուղղություններով Ղրիմի կենտրոնը թափանցած մեր զորքերի երկու խմբավորումները միավորվելով մեկ ընդհանուր՝ 4-րդ ուկրա-

---

11 Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին Ղրիմում հայ բնակչության թիվը կազմում էր մինչև 28 հազար մարդ։ Ղրիմը ֆաշիստական զորքերի կողմից օկուպացվելու ժամանակ մեծ թվով հայեր էվակուացվեցին ՍՍՌՄ-ի տարբեր շրջանները։ Օկուպացիայի մեջ մնացած հայերի մի մասն ընդգրկվեց հակաֆաշիստական պայքարի և պարտիզանական շարժման մեջ, իսկ մնացածը, գլխավորապես ծերունիներ, կանայք, երեխաներ և պատանիներ, հիտլերականների կողմից ռուս, ուկրաինացի, հրեա բնակչության հետ միասին ենթարկվեցին անասելի հալածանքների, ճնշման ու բնաջնջման, ավելի աշխատունակները զանգվածաբար քշվեցին Գերմանիա՝ ստրկական աշխատանքի։

Ղրիմի հայ բնակչությունը մեծ տառապանքներ կրեց ու կողոպտվեց նաև գերմանական բանակի հետ 1942 թ. Ղրիմ եկած դաշնակցական ավանտյուրիստների, խմբապետ Դրոյի ավազակային բանդայի կողմից։ Պակասը լրացրեց սովետական ժողովրդի ոխերիմ թշնամի Բերիան, որը Ղրիմը ազատագրվելուց հետո օրինազանցորեն, զրպարտությամբ տեղահան արեց ամբողջ հայ բնակչությանը։

12 Գ. Ղուկասյան, Անմոռանալի օրեր, Ռազմաճակատային հուշեր, Հայպետհրատ, 1954, էջ 123։

ինական ռազմաճակատի հրամանատարության ներքո, ավիացիայի և Սևծովյան նավատորմի համագործակցությամբ, մայիսի 7-ին հարձակման են անցնում Սևաստոպոլի ուղղությամբ։ Սևաստոպոլը պաշտպանող գերմանական զորքերի թիվը հասնում էր 100 հազարի։ Քաղաքի շուրջը կառուցված էին պաշտպանական ուժեղ դոտիներ։ Հիտլերը Սևաստոպոլի զորքերի խմբավորման համար սահմանել էր կրկնակի աշխատավարձ, հատուկ մեդալ, խոստացել էր յուրաքանչյուր զինվորի հող տալ Ղրիմում[13]։ Բայց այդ բոլորը չօգնեցին հիտլերականներին։

Սովետական զորքերը կոտրելով թշնամու կատաղի դիմադրությունը, իրար հետևից խորտակեցին նրանց ամրությունները, ճեղքեցին պաշտպանական գծերը և մայիսի 9-ին գրավեցին Սևաստոպոլը՝ Սև ծովի ռազմական այդ կարևորագույն բազան և ամրոցը, իսկ մայիսի 12-ին՝ հիտլերյան զավթիչներից լիովին մաքրեցին նաև ամբողջ Ղրիմը։

Եթե պատերազմի սկզբում գերմանացիները 250-օրյա պաշարումից հետո միայն կարողացան գրավել Սևաստոպոլը, ապա սովետական զորքերը 1944 թ. մայիսին՝ ընդամենը երեք օրում խորտակեցին Սևաստոպոլի հիտլերյան պաշտպանությունը, որի համար գերմանացիները պատրաստվում էին ամբողջ երկու տարի։ Ղրիմի ազատագրումը տևեց ընդամենը 35 օր, որի ընթացքում գլխովին ջախջախվեց Ղրիմի հիտլերյան 200-հազարանոց խմբավորումը[14] Դա Հայրենական պատերազմի ամենափայլուն էջերից մեկն էր։

Այդ մարտերում նորից անթառամ փառքով պսակվեց Կարմիր աստղի շքանշանակիր Թամանյան 89-րդ հրաձգային դիվիզիան, որը վրացական Անապայան Կարմիր դրոշի շքանշանակիր դիվիզիայի և մյուս միավորումների հետ միասին Սևաստոպոլի վրա հարձակման անցավ գլխավոր հարվածի ձախ թևի ուղղությամբ՝ Յալթա—Սևաստոպոլ խճուղուց մինչև Բալակլավայի ծովափը։

Առանձնապես նշանակալից էին Սևաստոպոլի բանալին հանդիսացող Սապուն-գորայի գրավման մարտերը։ Թամանցիները աչքի ընկան Սապուն-գորայի հարավային լանջերի Գորնայա բարձունքի գրավման համար մղված մարտերում. «Զորամասերից երկուսին մարտական խնդիր տրվեց՝ կազմակերպել գրոհող խմբերը և մարտակարգի աջ թևից հարձակվել Գորնայա բարձունքի վրա,— ասում է դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը,— հրետանային ահեղ կրակից հետո բանակայինները, սերժանտներն ու սպաները բացառիկ խիզախությամբ գրոհեցին բարձունքի վրա։ Զարդացնելով հարձակումը, մեր ստորաբաժանումները գրավեցին Գորնայա բարձունքի հյուսիսային մասը։ Այդ մարտերում առանձնապես աչքի ընկան Շահբազյանի և Մարդարյանի գումարտակները։ Բարձունքի հարավային մասի վրա, որն ավելի էր ամրացված, մեր ստորաբաժանումները գրոհեցին գիշերային խավարի պայմաններում։ Մայոր Հ. Սիմոնյանի գումարտակը մարտական գործողություններ սկսեց ուղիղ ժամը 3-ին, նրան օգնության հասավ կապիտան Բաբայանի գումարտակը։ Ժամը 6-ին Գորնայա բարձունքն արդեն մերն էր։ Այդ երկու գումարտակների հաջողությունը զարգացնելու նպատակով, մարտի մեջ մտցվեցին գնդապետ Ե. Կարապետյանի ստորաբաժանումները։ Նրանք կայ-

13 Տե՛ս газета «Коммунист» (Ереван), № 143, 21 июня 1961.

14 Տե՛ս «История Великой Отечественной войны Советского Союза 1941—1945», т. 4, стр. 94.

ծակնային հարված հասցնելով հակառակորդին, չորս կիլոմետր առաջ շարժվեցին թշնամու պաշտպանության խորքը։ Ամենուրեք թափված էին գերմանական զինվորների ու սպաների հարյուրավոր դիակներ։ Իսկ մեր հերոս ավտոմատավորների ուղեկցությամբ դեպի թիկունք էին փոխադրվում գերի վերցված գերմանական զինվորներն ու սպաները։

Գորնայա բարձունքի գրավումը ռազմական արվեստին տիրապետելու լավագույն օրինակ էր, որ ցույց տվեց, թե ինչպես սովետական բանակի մյուս զորամասերի հետ միասին հայ ռազմիկներն ընդունակ են քարուքանդ անելու և հաղթահարելու գերմանացիների ամենաանառիկ ամրությունները»[15]։

Հիտլերականները փորձեցին կասեցնել թամանցիների առաջխաղացումը, սակայն հարված հարվածի ետևից ստանալով, նրանց բզկտված զորամասերը սեղմվեցին ծովախորշերին։ Այստեղ էլ մայիսի 12-ին Խերսոնի հրվանդանի մոտ վերջնական ջարդ կրելով, գերի հանձնվեցին։

Ղրիմն ազատագրող սովետական զորքերը Սիվաշից և Կերչից արագորեն հասան Սևաստոպոլ՝ մարտերով անցնելով օրական 40—50 կիլոմետր, իսկ առանձին շարժական ջոկատներ՝ նույնիսկ 80 կիլոմետր։ Կայծակնային արագությամբ մտնելով թշնամու դասավորության խորքը մեր զորքերը կազմալուծում էին նրանց պաշտպանությունը։ «Ամբողջ պատերազմի ընթացքում գերմանացիները շատ են գրել ու խոսել կայծակնային գործողությունների մասին,— գրում է նավատորմի ծովակալ Ի. Ս. Իսակովը,— բայց գործնականում այդպիսի գործողություններ կատարել է կարմիր բանակը, մասնավորապես Ղրիմը մաքրելիս»[16]։

Այս տեմպերով ընթացան նաև Թամանյան դիվիզիայի մարտական գործողությունները Ղրիմում՝ հայ ժողովրդի արժանավոր զավակ, դիվիզիայի տաղանդավոր հրամանատար, գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի ղեկավարությամբ։

Սևաստոպոլի համար մղված մարտերում Թամանյան դիվիզիան ոչնչացրեց գերմանական 1905 և գերի վերցրեց 2589 զինվոր ու սպա, այդ թվում 4 գնդապետ, ոչնչացրեց և որպես ռազմաավար գրավեց տարբեր տրամաչափերի 277 հրանոթ ու ականանետ, 1540 ավտոմեքենա ու մոտոցիկլետ, 290 գնդացիր, 2500 հրացան և ավտոմատ, գրավեց 4 ռազմական պահեստ[17]։ Ռազմաճակատի հրամանատարության մարտական առաջադրանքները գերազանցորեն կատարելու համար Թամանյան հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան ՍՍՌՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով, իսկ նրա 390-րդ և 400-րդ գնդերն արժանացան «Սևաստոպոլյան» պատվավոր կոչման։ Դիվիզիայի անձնակազմից մարտերում աչքի ընկած 5860 մարտիկ, հրամանատար ու քաղաշխատող պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, որոնց թվում գրոհային խմբի հրամանատար լեյտենանտ Սիմոն Բաղդասարյանը, ջոկի հրամանատարներ, սերժանտ Հարություն Մկրտչյանը, Վարդգես Ռոստոմյանը, դասակի հրամանատար, ավագ սերժանտ Այդին Հարությունյանը, լեյտենանտ Խորեն Խաչատրյանը արժանացան Սովետական Միության հերոսի կոչման։ Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանով

15 ՀՊՊԿ-ի արխիվ, ֆ. 4, գ. 4, թ. 1։

16 Նավատորմի ադմիրալ Ի. Ս. Իսակով, ՍՍՌՄ ռազմածովային նավատորմը Հայրենական պատերազմի ընթացքում, Հայպետհրատ, 1946, էջ 130։

17 Տե՛ս Архив МО СССР, ф. 89 с. д., опись 20929, дело 11.

պարգևատրվեց դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը։

Այս հաղթանակների մեջ մեծ էր դիվիզիայի կուսակցական կազմակերպության ավանդը։ Մարտերի ընթացքում նա փայլուն կերպով էր կատարում իր առջև դրված խնդիրները։ Հանուն հաղթանակի իրենց արյան վերջին կաթիլը տալու պատրաստակամությամբ կուսակցական և կոմերիտական ռազմիկները ձեռք բերին ամբողջ անձնակազմի սերն ու վստահությունը։ Դրա շնորհիվ անընդհատ աճում էր միավորման կուսակցական կազմակերպությունը։ Հենց միայն Ղրիմի կամպանիայի ընթացքում կուսակցության շարքերն են ընդունվել 1400-ից ավելի մարտիկներ ու սպաներ։

Սևաստոպոլի ազատագրման մարտերում հերոսի մահով ընկան հարյուրավոր քաջեր՝ 526-րդ գնդի ավտոմատավորների վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Խաչիկ Միրոյանը, շարքային Մարտիրոս Մարտիրոսյանը, 400-րդ գնդից՝ ավագ լեյտենանտ Խաչիկ Աղաջանյանը, 476-րդ կապի գումարտակից՝ լեյտենանտ Գարեգին Մելքոնյանը և ուրիշներ։ Ի հավերժացումն Սևաստոպոլի ազատագրման մարտերում զոհված 89-րդ հայկական դիվիզիայի ռազմիկների հիշատակի 1944 թ. օգոստոսին Գորնայա բարձունքի լանջին ժամանակավոր հուշարձան կանգնեցվեց նրանց եղբայրական գերեզմանների վրա։ Հենց այդտեղ հուշարձան կանգնեցվեց նաև վրացական դիվիզիայի զոհված ռազմիկների եղբայրական գերեզմանների վրա[18]։

---

18 Սևաստոպոլի երախտագետ աշխատավորության և Սեծովյան նավատորմի հրամանատարության նախաձեռնությամբ հայկական և վրացական դիվիզիաների զոհված ռազմիկների եղբայրական գերեզմանների վրա կանգնեցված հուշարձանները, որոնք պատերազմի ժամանակ պատրաստվել էին հասարակ և անշուք ձևով, 1961 թ. Հայրենական պատերազմի 20-ամյակի կապակցությամբ վերակառուցվեցին և վերածվեցին բազալտակերտ ու մարմարակերտ գեղեցիկ մոնումենտների։ Սևաստոպոլի աշխատավորները, նավատորմի անձնակազմը շաբաթօրյակներ կազմակերպեցին հուշարձանների հրապարակը և շրջապատը մաքրելու, եղբայրական գերեզմանները կարգավորելու համար, նրանք ստեղծեցին նաև մոնումենտների կառուցման ֆոնդ։

Այդ շաբաթօրյակների կազմակերպման և մոնումենտների կառուցման ֆոնդ ստեղծելու համար Սեծովյան նավատորմի հրամանատարությունը և քաղաքաժինը հասարակայնությանն ուղղված կոչեր հրապարակեցին։

Այդ կոչերը ջերմ արձագանք գտան Սեծովյան նավատորմի անձնակազմի, Սևաստոպոլ քաղաքի աշխատավորության շրջանում, ինչպես նաև Հայաստանի ու Վրաստանի հանրապետություններում։ Հուշարձանները վերակառուցվեցին Հայաստանի և Վրաստանի նյութական օժանդակությամբ, ճարտարապետների նախագծերով, քանդակազարդվեցին ազգային ճարտարապետության ոճով, տերիտորիան կանաչապատվեց նույն հանրապետություններից բերված ծառերով ու ծաղիկներով։

Թամանյան դիվիզիայի ռազմիկների կոթողն ունի հետևյալ ձևը՝ (նախագծի հեղինակ ճարտարապետ Հ. Թորոսյան) ճակատային մասում քանդակված է մայր հայրենիքը սիմվոլացնող ողբացող կնոջ բարելիֆը։ Նա երկու ձեռքով բարձր բռնել է հավերժ վառվող ջահը։ Բարելիֆի վրա փորագրված է «Հավերժ փառք սովետական ժողովրդի ազատության համար մղված մարտերում, Սևաստոպոլի ազատագրման համար հայկական Թամանյան Կարմիր դրոշի և Կարմիր աստղի շքանշանակիր 89-րդ հրաձգային դիվիզիայի զոհված ռազմիկներին» խոսքերը։ Կոթողները և եղբայրական գերեզմանները կառուցված են Բալակլավայի խճուղուց 9 կմ հեռու գտնվող «Գորոտայա Բալկա» սովխոզի մոտ։ Հուշարձանի բացումը տեղի ունեցավ 1961 թ. աշնանը Հայկական և Վրացական ՍՍՌ պատվիրակությունների, Սեծովյան նավատորմի և Սևաստոպոլի պետական, կուսակցական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հանդիսավոր միտինգում, որը վերածվեց համաժողովրդական հայրենասիրական ցույցի։ Ինչպես մոնումենտ հուշարձանն իր էությամբ, այնպես էլ նրա կառուցման համաժողովրդական մասնակցությունը հանդիսացավ սովետական ժողովուրդների լենինյան անխախտ բարեկամության մի նոր վկայություն։

Ղրիմի և Սևաստոպոլի մարտերում կռվող մյուս միավորումների շարքերում աչքի ընկան Հայաստանի շատ զավակներ։ Պերեկոպի ուղղությամբ հարձակվող գվարդիական 2-րդ բանակի զորքերի կազմում էին գործում կապի ծառայության գնդապետ (հետագայում գեներալ-մայոր) Եվգենի Ասատուրովը, ռազմա-օդային կապի պետ, գնդապետ Անուշավան Ստեփանյանը, 315-րդ հրաձգային Մելիտոպոլյան դիվիզիայի հրամանատար, Սովետական Միության հերոս, գեներալ-մայոր Ասքանազ Կարապետյանը։ Նրա ղեկավարությամբ դիվիզիայի զորամասերը ապրիլի 8—9-ը համառ մարտերով, կոտրելով թշնամու դիմադրությունը, գրավում են Արմյանսկ քաղաքը և կայարանը՝ Պերեկոպի ուղղությամբ հակառակորդի պաշտպանության հզոր հենակետերից մեկը, արժանանում բանակի ռազմական խորհրդի շնորհակալությանը[19] և պարգևատրվում Կարմիր դրոշի շքանշանով։

Ինտերնացիոնալ կազմ ունեցող 315-րդ դիվիզիայում մարտական շքանշաններով պարգևատրվածների թվումն էին նաև շատ հայեր՝ Սուրեն Հարությունյանը, Գառնիկ Երամյանը, Հայրապետյանը, Մեջլումյանը, Բալայանը, Դիլանյանը, Խաչատրյանը, բժիշկ Յոլակ Ղարիբյանը և ուրիշներ։ Միավորման հայ ռազմիկները ջերմ նամակ գրեցին Հայաստան, հայ ժողովրդի նակազը սրբությամբ կատարելու մասին, արձագանքելով, որ «Հայ սպաները, սերժանտներն ու մարտիկները բոլոր մարտերում իրենց ցուցաբերել են որպես իրենց հայրենիքի, իրենց նշանավոր նախնիների արժանավոր զավակները»[20]։

51-րդ բանակի քաղբաժնի պետի կոմերիտական գծով տեղակալն էր Ստեփան Դանիելյանը (այժմ գնդապետ, Հայկական ՍՍՌ ռազմական կոմիսարիատի քաղբաժնի պետ)։ Նա բոլշևիկյան, հայրենասիրական բոցաշունչ պրոպագանդայով պայքարի էր հանում բանակի երիտասարդությանը, որը հրաշքներ էր գործում Սևաստոպոլի ազատագրման համար մղվող մարտերում։ Քաղաշխատողի իր տաղանդով փայլեց Կարմիր դրոշի կրկնակի և Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշանակիր 257-րդ հրաձգային դիվիզիայի քաղբաժնի պետ գնդապետ Սիմոն Սարգսյանը։ Նա իր մարտական առաջին մկրտությունը ստացել էր դեռևս 1941—1942 թթ. հայկական 390-րդ և 408-րդ հրաձգային դիվիզիաների շարքերում՝ Ղրիմի ու Կովկասի համար մղված պաշտպանական մարտերում։ Գնդապետ Սարգսյանի ջանքերով բարձր հիմքերի վրա էին դրվել դիվիզիայի կուսակցական-քաղաքական աշխատանքները, ռազմիկների դաստիարակության գործը։ Դա մեծապես օգնեց մարտական առաջադրանքների կատարմանը։ Իշունյան ամրությունների ճեղքման և առանձնապես Սևաստոպոլի ազատագրման համար մղվող մարտերի ավանգարդումն էին ընթանում կուսակցականներն ու կոմերիտականները։ Դիվիզիայի աչքի ընկած ռազմիկների մեջ էին նաև տասնյակ հայ մարտիկներ ու սպաներ, որոնց թվում՝ գումարտակի շտաբի պետ մայոր Սեպուհ Կյուրդղյանը, վաշտի հրամանատար Բարխուդար Բաբայանը, գումարտակի հրամանատարի քաղաքական գծով տեղակալ Գևորգյանը, շարքային Աշոտ Մարգարյանը և ուրիշներ։ Կոմերիտական Բարխուդարը զոհվեց Սիվաշից հարավ, Իշունյան ամրությունները ճեղքելու ժամանակ։ Նրա գրպանում գտնվեց կոմունիստական կուսակցության շարքերն ընդունվելու մասին հետևյալ դիմումը՝ «Ես, ավագ լեյտենանտ Բարխուդար Հարությունի Բա-

19 Տե՛ս «Երևան», 23 փետրվարի, 1962։

20 «Սովետական Հայաստան», № 199, 6 հոկտեմբերի, 1944։

բայանս, սիրում եմ իմ ընտանիքը... բայց ամենից ավելի սիրում եմ իմ հայրենիքը՝ սովետական երկիրը, բոլշևիկների կուսակցությունը, որն ինձ՝ նախկին բատրակիս, դաստիարակեց, տվեց բարձրագույն կրթություն։ Եթե ես մեռնեմ հարազատ հայրենիքիս ազատագրման համար մղված մարտում, թշնամու դնդակից, ինձ համարեցեք մեծ Լենինի կուսակցության անդամ»[21]։

Այդ փաստաթուղթը լայնորեն մասսայականացվեց մարտիկների շրջանում։

Գվարդիայի շարքային Աշոտ Մարգարյանը մայիսի 7-ին Սապուն-գորայի ամրությունները գրոհող խմբի մարտիկների շարքում առաջիններից էր, որ նետվեց թշնամու դիրքերի վրա։ Այստեղ Աշոտը նկատում է գերմանացի ավտոմատավորին, որը ավերված դզոտի փլատակների հետևում թաքնված՝ իր զենքն ուղղել էր լեյտենանտ Սախարովի վրա։ Արիասիրտ զինվորը ակնթարթաբար առաջ նետվելով, իր մարմնով ծածկում է լեյտենանտին, զոհվում, բայց ազատում է հրամանատարի կյանքը, որը վճռական մոմենտին մարտի էր տանում գրոհային խմբին։

Սապուն-գորայի գրոհը Հայրենական մեծ պատերազմի տարեգրության փայլուն էջերից մեկն է։ «Սապուն-գորայի համար մղված մարտերում,— ասված է այդ մասին «Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի պատմության» 4-րդ հատորում,— աչքի ընկան կապիտան Ն. Վ. Շիլովը, ավագ լեյտենանտ Պ. Մ. Կալինիչենկոն, լեյտենանտներ Վ. Ֆ. Ժուկովը և Մ. Յա. Դզիդունսկին, կրտսեր լեյտենանտ Վ. Ֆ. Գրոմակովը, ավագ Ա. Մ. Ֆիսենկոն, ավագ սերժանտ Ֆ. Ն. Սկորյատինը, եֆրեյտոր Վ. Ի. Դրոբյազկոն, շարքայիններ Ս. Պ. Եվգլևսկին, Ի. Կ. Ցացունենկոն, Դադաշ Բաբաջանովը, Աշոտ Մարգարյանը և շատ ուրիշ խիզախ մարտիկներ և սպաներ»[22]։

Աշոտ Մարգարյանի դյուցազնաբար զոհվելու հուզիչ էպիզոդը պատկերվեց Սապուն-գորայի լանջին կառուցված «1944 թ. մայիսի 7-ի Սապուն-գորայի գրոհը» դիորամայի գեղանկարչական խոշոր կտավի կենտրոնում»[23]։

«Փառք ձեզ, բաջեր, փառք
անվեհերներ.
Հավերժ փառք է երգում
ձեզ ժողովուրդը,
Անվախ ապրեցիք, մահը
խորտակեցիք,
Ձեր հիշատակը երբեք չի մարի»։

Սովետական ժողովրդի սրտից բխած այս խոսքերն են խորագրված դիորամայի կողքին կանգնեցված զոհվածների կոթողի վրա։

Ղրիմի և Սևաստոպոլի ազատագրմանը մասնակցեցին նաև մեծ թվով հայ ծովայիններ Սևծովյան նավատորմից, որոնք ցույց տվին խիզախության սքանչելի օրինակներ։ Դրանցից էին Կերչի ռազմածովային բազայի դեսանտային նավի մոտորիստների հրամանատար Արամայիս Հարությունյանը, ականներ դնող 37 մոտորազայի կարմիրնավատորմային Զավեն Կարագաշյանը, Սերգեյ Օգանովը, «Նեվա» կատերի էլեկտրիկ Սեմյոն Կիսանովը և ուրիշներ։

21 Տե՛ս Սևծովյան նավատորմի օրգան «Флот родины» օրաթերթը, № 108, 9 մայիսի, 1963։

22 Տե՛ս «История Великой Отечественной войны Советского Союза 1941—1945», т. 4, стр. 94.

23 Տե՛ս «Սովետական Հայաստան», № 143, 19 հունիսի, 1960։

Տասնյակ հայ ծովայիններ աչքի ընկան մարտնչող գվարդիական «Սևաստոպոլ» գծանավի անձնակազմում, որը բաղկացած էր 20 ազգությունների ռազմիկներից, «Կրասնի Կավկազ», «Կրասնի Կրիմ» հածանավերի, «Կրասնայա Աբխազիա» հրետանավակի և այլ մարտանավերի անձնակազմերի շարքերում։

Ծովամարտերը և դեսանտային գործողությունները, որոնք ըստ էության հարձակողական բնույթի օպերացիաներ էին, մեծամասնությամբ կատարվում էին ավիացիայի, ծովային հետևակի հետ կոմբինացված ուժերով։ Այդ մարտերում աչքի ընկան Սևաստոպոլյան գվարդիական 1-ին զենիթային հրետանային գնդի 23-րդ դիվիզիոնի հրամանատար, գվարդիայի մայոր Բագրատ Յուխանյանը, որի ղեկավարած դիվիզիոնը 1944 թ. հունվարին խփեց թշնամու 11 ինքնաթիռ, մեկ հրանոթ, մեկ ականանետային մարտկոց, ավտոմեքենա, ցրիվ տվեց և մասամբ ոչնչացրեց հակառակորդի մեկ վաշտի անձնակազմը։

1944 թ. ապրիլի 12-ից մինչև մայիսի 10-ը Ղրիմում գործեց Կարմրագրոշ Բալթիկան նավատորմի գվարդիական 47-րդ գրոհային ավիացիոն գունդը Սովետական Միության հերոս, մայոր Նելսոն Ստեփանյանի ղեկավարությամբ։ Ղրիմում Ստեփանյանն իր արծիվներին համարձակ կռիվների առաջնորդեց Սևաստոպոլի, Թեոդոսիայի, Սուդակի շրջաններում։ Նրա մարտական օդաչուները ջախջախիչ հարվածներ հասցրին հակառակորդի Սևաստոպոլ—Ռումինիա ծովային կոմունիկացիայում նավարկող նավերին, նրանք ջրասույզ արին 28 տրանսպորտյոր և այլ ռազմանավեր, ոչնչացրին ավելի քան 3500 ֆաշիստական զինվոր ու սպա։ Հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու համար Գերագույն գլխավոր հրամանատարության հրամանով 47-րդ գվարդիական գրոհային ավիագունդը ստացավ «Թեոդոսյան» պանծալի անունը և պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով։

Ղրիմի և Սևաստոպոլի հերոսամարտերում անօրինակ սխրագործություններ կատարեցին և Սովետական Միության հերոսի բարձր կոչման արժանացան Սովետական Հայաստանի անձնուրաց զավակներից 9 ռազմիկներ։ Դրանցից էին 216-րդ հրաձգային դիվիզիայի վաշտի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Աղվան Բաբայանը, որը մարտի թեժ պահին փոխարինելով գումարտակի զոհված հրամանատարին, զորամասը հաղթանակի հասցրեց, գրավեց անգլիական գերեզմանատունը։ Քաղաքի փողոցային մարտերում ստորաբաժանումները ոչնչացրին մեծ թվով հիտլերականներ։ Ավտոմատավորների դասակի հրամանատար, ավագ Իշխան Սարիբեկյանը մայիսի 7-ին, Սապուն-գորայի գրոհման օրը, ընդունվում է կոմունիստական կուսակցության շարքերը։ Ի նշանավորումն այդ մեծ պատվի, իր գրոհային խմբով նա ոչնչացնում է թշնամու 5 կրակակետ, համառ մարտերով ճանապարհ հարթում զորամասերի առաջընթացի համար։ Օրջոնիկիձեի անվան 77-րդ հրաձգային դիվիզիայի գումարտակի հրամանատար կապիտան Հարություն Չաքրյանը հերոսի մահով ընկավ Սապուն-գորայի լանջին։

Ղրիմը հիտլերականներից մաքրելուց հետո ռազմաճակատի բոլոր միավորումներում և զորամասերում, այդ թվում նաև հայկական 89-րդ Թամանյան դիվիզիայում տեղի ունեցան հաղթանակի ուրախ միտինգներ, որտեղ հանրագումարի բերվեցին մարտերի արդյունքները։ Այդ օրերին դիվիզիան ստացավ Հայաստանի Կ(բ)Պ Կենտրոնական կոմիտեի ողջույնի հեռագիրը, որտեղ ասված էր.

«Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտրոնական կոմիտեն ջերմորեն ողջունում է 89-րդ Թամանյան դիվիզիայի ամբողջ անձնակազմին՝ կառավարական բարձր պարգևի համար։ Հայաստանի աշխատավորները հպարտությամբ իմացան դիվիզիայի, նրա մարտական հրամանատարի, մարտիկների, սերժանտների, սպաների՝ հարազատ Ղրիմը գերմանա-ֆաշիստական զավթիչներից ազատագրելու համար մղած մարտերում աչքի ընկած հայ ժողովրդի քաջարի զավակների պարգևատրման մասին։

Համոզված ենք, որ դիվիզիայի մարտիկները, սերժանտներն ու սպաները... առաջիկա մարտերում ցույց կտան Լենինի մեծ գործին նվիրվածության բարձր օրինակներ և իրենց կծածկեն մարտական նոր փառքով»[24]։

1944 թ. հունիսի 3-ին հայ ռազմիկներին այցելում է Հայաստանից Ղրիմ ժամանած գրողների, արվեստի և մամուլի աշխատողների մի բազմամարդ պատվիրակություն, որի կազմում էին՝ հին բոլշևիկ բանաստեղծ Ազատ Վշտունին, Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի դեպուտատ, ժողովրդական արտիստ Շարա Տալյանը, գրականագետ Հ. Մկրտչյանը, «Սովետական Հայաստան» օրաթերթի խմբագրի տեղակալ Ա. Պետրոսյանը, ասմունքի կին վարպետ Ե. Քալանթարը, Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստ Մ. Սեդմարը, դաշնակահարուհի Ա. Ավդալբեկյանը, արտիստ Հ. Ասլանյանը և ուրիշներ։

Նրանք համերգներ են կազմակերպում զորամասում, մասնակցում միտինգներին, հայ ժողովրդի ողջույնն ու հիացմունքն են հայտնում ռազմի դաշտում թշնամու դեմ հաղթանակ տարած հայ հերոսներին։

Մարտիկներն ու հրամանատարները շնորհակալություն են հայտնում այն հոգատարության համար, որ ցույց էին տալիս հայ ժողովուրդը, Հայաստանի Կ(բ)Պ Կենտրոնական կոմիտեն և կառավարությունը ռազմաճակատում գտնվող մարտիկներին։ Արտահայտելով հայ ռազմիկների կամքը, Թամանյան դիվիզիայի Սևաստոպոլյան 390-րդ պանծալի գնդի հրամանատար գնդապետ Ե. Կարապետյանը Հայաստանի պատվիրակությանն ուղղված իր խոսքում ասում է.

«Ամբողջ պատերազմի ընթացքում մարտերի թեժ պահերին, խրամատներում նստած կամ հարձակման մոմենտին, մեզ միշտ ջերմացրել ու ոգեվորել են Հայաստանի բոլշևիկների կուսակցությունը, կառավարությունը և ժողովուրդը։ Մենք կաշխատենք այսուհետև ևս արդարացնել մեր կուսակցության, մեր կառավարության և ժողովրդի հույսերը, այո, կարդարացնենք, թեկուզ դա լինի մեր կյանքի գնով»[25]։

Հունիսի 6-ին Հայաստան է մեկնում դիվիզիայի հրամանատար, գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը և ռազմիկների մի մեծ պատվիրակություն, որի կազմում էին մայորներ՝ Պ. Ավալյանը, Գ. Սիմոնյանը, Մ. Մաղաքյանը, կապիտաններ՝ Ռ. Ակոպովը, Ա. Անոյանը, բժշկական ծառայության կապիտան Խ. Մխիթարյանը, ավագ լեյտենանտ Գ. Լալաբեկյանը, ավագ Ս. Վարդանյանը, ավագ սերժանտներ Մ. Մելքոնյանը, Ռ. Մանուկյանը, Ա. Մկրտչյանը։

Սովետական Հայաստանի աշխատավորությունը գրկաբաց ընդունեց կտրիճ թամանցիներին, հանձին նրանց ողջունեց Ղրիմի ազատագրմանը մասնակցած բոլոր հայ ռազմիկներին, որոնք սրբությամբ էին կատարել ժողովրդի

---

24 Ս. Նալբանդյան, Հայ թամանցիները, Երևան, 1947, էջ 115։

25 «Սովետական Հայաստան», № 122, 20 հունիսի, 1944։

նակազը և իրենց զինվորական պարտքը Ղրիմից ֆաշիստական դավթիչներին վռնդելու գործում։

Е. М. Халеян

ВОИНЫ-АРМЯНЕ В БОЯХ ЗА ОСВОБОЖДЕНИЕ КРЫМА

Резюме

89-я Армянская Таманская дивизия участвовала в борьбе за освобождение Крыма с декабря 1943 по май 1944 года в составе Отдельной Приморской Армии.

За освобождение Керчи дивизия была награждена орденом «Красного Знамени». Двум полкам Армянской дивизии присвоено наименование «Севастопольских».

В числе представителей разных национальностей Советского Союза, принимавших участие в боях за освобождение Крыма в составе войск 4-го украинского фронта, было много воинов-армян.

Автором приводятся некоторые факты об участии многих воинов-армян в боях за Крым также в составе других соединений Советской Армии.

За проявленную доблесть при освобождении Крыма сотни воинов-армян были награждены боевыми орденами и медалями, а девять человек (в том числе пятеро из 89-й Таманской дивизии) получили высокое звание Героя Советского Союза.